ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ներսիսյան,

Ի պատասխան Ձեր 02.11.2021թ. հ.183 գրության, տեղեկացվում է.

Նոր Արեշ թաղամասի մի խումբ բնակիչների կողմից բարձրացված հարցը՝ թաղամասի (մասնավորապես՝ Նոր Արեշի 7-րդ, 9-րդ փողոցների) տրանսպորտային սպասարկման խնդրի վերաբերյալ, քննարկվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ համատեղ:

Երևան քաղաք է ներկրվել միջին դասի ավտոբուսների նոր խմբաքանակ, որոնց շահագործման կազմակերպման գործընթացի շրջանակներում, ըստ առաջնահերթության, ներկայումս դիտարկվում է մայրաքաղաքի առանձին թաղամասերի (այդ թվում՝ Նոր Արեշ թաղամասի) տրանսպորտային սպասարկման վիճակի բարելավման հնարավորությունը: Այդ գործընթացի ընդհանուր համատեքստում կդիտարկվի նաև Նոր Արեշի բնակիչների կողմից ներկայացված առաջարկը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ